

«Հովհաննես Պոմանֆուան Լափարտենի մարքեզը, որ Մեյնի կառավարիչ էր, որ մը որսի ելլելով անտառին մէջ ան ածխագործներուն բնակարանին քովէն անցաւ. որոնք որսորդներուն ձայնը լսելով սկսան փախչիլ: Սար-

Օտար տէրութեանց ընդհանուր հիւստիւնները վաղը ճամբայ ելելու են Վասիլիէ երթալու, ուր տեղ կը գտնուի Բարձրագոյն փաշան սեպտեմբեր 16 էն ՚ի վեր, իր բոլոր գերդաստանովը: Մէհէմէտ իւր փաշան աս օրերս այցելութեան գնաց իր որդւոյն Խալասիմ փաշային. որով յայտնի կը լայ թէ միշտ սիրով ու միաբան են մէկմէկու հետ:

Հասարակաց առողջութիւնը խիստ աղէկ վիճակի մէջ է թէ աս քաղաքը և թէ ներսի կողմերը:

Սարտենիայի տէրութեան Սէն Վէնսան ըստած Ֆուէկաթը որ քանի մը օր առաջ եկաւ հոս, առանց հաղորդակցութիւն ընելու քաղքին հետ, նորէն զարձաւ մեր նաւահանգիստը, Լ.թէքէն զարով: Յիշեալ նաւուն հրամանատարը Վասիլիէ գնաց պարտելու:

Երէկ չէ առջի օրը Ռուսաց կառավարութեան մէկ պուլիքը եկաւ հոս Կոստանդնուպօլիսէն. որ մահտարաժամի հիւանդութիւնէ ախտացեալ մարդոց հազուադէպ թեւեռներով, (տէսա տանելու է: Աս հազուադէպը թէքէնէ սնտուկներու մէջ զըրուած են Ռուսաց առողջութեան մասնաւոր ժողովայն հոգողութեամբ, որ քանի մը ամիս առաջ Վասիլիէ էր, ու յիշեալ հազուադէպը հոն ձգեց որ ետքը մաքրէ վանոնք նոր սահմանուած միջոցովը:

Պոսկայի երկրորդ շրջանակին ուշանալուն համար հասարակութեան մտատանջութիւնը բարեբաղդաբար փարատեցաւ. վասն զի յիշեալ շրջանուր ան վնաս հասաւ Սուէզ սեպտեմբեր 21 ին: Սուէզի եկած գիրքերը այսօր Մալթա խրկուեցան զաղլիական շրջանակով, նաւահանգստին մէջ Լնդոնի շրջանակը չըլլալուն պատճառովը:

ԱՄՈՐԵՍՏԱՆ

Կամակոս, 26 Ապտեմբեր:

Աս քաղաքը հիմնականօրէն հանգստութեան մէջ է, ու անցածները պատահած խռովութիւնները դադարեցան և բարեկարգութիւնը նորէն հաստատուեցաւ տեղւոյս կառավարչին ու հաղարսպետին բարեխնամ հոգողութեամբը: Կանոնաւոր զօրքերուն

քէզը դող կարծելով զանոնք ետենէն մարդ վաղցուց, որ բռնելով զանոնք բերին մարքէզին տնէն: Իր ծառաներէն մէկը տեսնելով որ ան խեղճ գեղացիներուն մէկը գլխուն գտակը չէր հանած, մօտիկցաւ քովը, առաւ գտակը ու սպառնալով զարկաւ գետինը. բայց գլխուն եղջիւրը տեսնելով, մարքէզը իր ամբողջ տանել տուաւ զանիկա, ու քանի մը օրէն կտքը թագաւորին խրկեց, որ բոլոր իր պալատականներուն ցուցնելէն ետքը, իր ախոսի սպասաւորներուն մէկուն տուաւ, որ հասարակութեան ցուցնելով դրամ վաստելի: Աս մարդուն գլուխը կնտակ (տագ) է, մօրուը կարմիր ու փունջ փունջ զատուած է մէկմէկէ, ինչպէս և ծոծրակի (էնքսէ) մազերն ալ, ու գլխովին այժմամբ կը կրնան:

Աս օրագրոյն վրայ՝ քիչ մը բան կը ցնայ մեղի աւելցընել Քրանչեպօ Վրուկիւրի վարքը կատարելու համար: Աս խեղճ մարդը՝ ինչպէս տեսանք, իր տգեղութեան ամենալով տղայութեան ժամանակը փախեր էր իր ծնած գեղէն, ու գացեր էր անտառներուն մէջ բնակութիւն գտնելու: Վրուկին է երևակայել թէ ի՞նչ եղաւ խեղճ Քրանչեպօն, երբոր ախոսի սպասաւորը, որուն տուել էր զանիկա թագաւորը, ստիպեց ժողովրդոց դիմացը ելլելու հետաքրքիր գազանի նման, առտուրէն ինչուան

ջանքը ու վարմունքը աս խռովութեանց մէջ ան շուշտ գովութեան ու շնորհակալութեան արժանի են:

Զօրքերուն նոր կարգադրութեանց հրամանագիրը մեծ հանգէսով ու պատերազմական և քաղաքական կառավարիչներուն ներկայութեանը, սեպտեմբեր 9 ին կարգացուեցաւ: Հասարակութիւնը մեծ ուրախութիւն ու երախտագիտութիւն ցուցուց աս բանին համար, ու հրապարակաւ բարեմաղթութիւններ ըրին Վեհափառ Բըքային անգին կենացը պահպանութեանը ու անոր թագաւորութեան երջանկութեանը և բարեբաղդութեանը համար:

Աս տեղս գոնուած զօրքերը արդէն բաւական ժամանակ ծառայութիւն ըրած ըլլալով, դարունը հասնելուն պէս հրաման պիտ' որ տրուի որ իրենց հայրենիքը դառնան:

Սուրբէ էմինին Մէքքէ երթալու բազմաթիւ ուխտաւորներով հասաւ հոս ամսուս 12 ին: Տեղւոյս կառավարիչը ու երեւելի անձինքը մեծ հանգէսով զիմարտելով տարին գինքը ինչուան իրեն համար սահմանուած բնակարանը:

ՌԱՏՈՍ

25 Ապտեմբեր:

Կիրակի օր օսմանեան Սերի Ղ'էփա շոգիւնուր մեծ ծովագետին դրօշակովը աս նաւահանգիստը հասաւ: Իսկոյն աս կղզին երեւելի պաշտօնատարները շոգիւնուր գացին Բարձրագոյն փաշային գալուստը բարեմաղթելու համար, նմանապէս յուսաց և հրէից աղբյւրին հոգաբարձուները իրենց խոնարհ յարգութիւններն մատուցանելու գացին: Մեծ ծովագետը երբ որ ցամաքը ելաւ, բոլոր հիւպատոսները փութացան այցելութեան երթալու Կորին Բարձրութեանը, որ շատ սիրով ու քաղաքավարութեամբ ընդունեց զանոնք:

Չորս օր աս կղզին մնալէն ետքը մեծ ծովագետը տը յիշեալ շոգիւնուր ճամբայ ելաւ Սադախա երթալու համար, որուն շրջակայները գոնուած ածուխի հանքերը աչքէ պիտ' որ անցունեն:

Իրիկուն կողիտ մարդկանց առջին կեցած ծաղը կը լար: Չգիմացաւ եղկելին, խորունկ տխրութեան մէջ խնկելով շուտով գերեզման իջաւ ու անանկ թշուառ վախճանելոյն վրայ՝ մէկուն ալ գուրը չարժեցաւ. նաւ մեռնելէն ետքը իր գերեզմանին անձունի տապանադիրը կարգաւոր հասարակութիւնը, նոյն ծիծաղները կընէին ու կը խնայէին վրան, որոնք իր կենդանութիւնը յուսահատութեամբ անցընելու պատճառ եղած էին:

Աս կերպ այլանդակութիւն, որ հասարակութեան այսքան մեծ զարմացմանը պատճառ եղաւ, գուցէ անանկ հաղուստիւ չէ ինչպէս կրկարծուի, թէ որ անցեալ դարերուն պատմագիրներուն լուրսեմբը գատելու ըլլանք նէ: Ինչու որ ասանկ հրաշաւոր յատկութիւն ունեցող մարդիկ միշտ մեծ հոգ ունեցած պիտ' որ ըլլան ծածկելու զանիկա ուրիշներէն, գոնէ որքան որ կրնէին իրենց աս չարագուշակ եղջիւրներուն դիմքը կամ թիւր: Մանաւանդ ինչպէս որ տեսանք, միայն դիպուածն էր որ Վրուկիւրի եղջիւրը յայտնել տուաւ:

Տիմանչ անուն սյրի կնկան մը, (որն որ իր գրացիները եղբերաւոր խաթուն կը կանչէին) շատ գժուար կը լար ծածկելը, վասն զի անոր եղջիւրին ծայրը՝ դէպ'ի ետեւի գին ծռուելու տեղը, առջեւ ու դէպ'ի վար էր: Աս կը-

Նաւատարմիցը Մուսուախայի ծովագետը երկաթ նետած է:

Աւստրիացի Մարիա Գորլէթը և գաղղիական Ֆուէկաթ մը երէկ մեր կղզին առջևները երկրան Բարեմաղթէն գալով, բայց աս նաւերը ամենեւին չտարսելով իրենց ճամբանէն շարունակեցին:

Երկրաշարժութեան նոր ցնցումները զգացինք աս օրերս:

Քաղքի ըստած կղզին կործանուելը մօտ է. ուր տեղի լեռը որ սկսեք էր փլչել, որոտումի նը ման ձաներ կը հանէ հիմայ: Մեծամեծ ժայռեր աւտեն ատեն կրիթթին կիյնան, ու թանձրամած մուկ կըլլէ անոր զազաթէն: Լըղէն շատ տուներ փլուէ ցան երկրաշարժութեանէն, որ կը շարունակէ գիշեր և ցերեկ: Աս կղզին բնակիչները մեծ ահաւորութեան մէջ են, ու միտք ունին բոլորովին ձգել կղզին և ուրիշ տեղ երթալ բնակել:

ԱՐՏԱՔԻՆ ԵՈՒՐՈՒՄ

ԱՆԳՂԻՆ

Ռեբեկեան ըստած խռովայող ընկերութիւնը որոնց անդամները զիմակաւոր ու երեսներն սե ներկած կը պտուտին, մէկ ժամանակ Կալէսի երկրին հասարակութիւնը խնդացունէլէն ետքը, հիմակ Լնդոնի կառավարութեանը քիչ մը անհանգստութիւն կը պատճառեն:

Քանի մը տարի կայ տէրութիւնը անցքի բաժ (պաճ) ու ճամբաներու ցանկ հաստատուեց Կալէսի երկրին մէջ, որոնց համար շատ տոգոհութիւն ցուցուց հասարակութիւնը: Կալէսի գեղացիները, որ ինչուան նոյն ատենը աս տուրքը չէին վճարեր, որն որ Լնդոնի ուրիշ ամէն նահանգներուն մէջ շատոնցմէ հաստատուած է, խիստ գէշ սրտով ընդունեցին աս նոր օրէնքը. ուստի սկսան տեղ տեղ ցանկերը քակել ու պահապաններուն բնակարանները փլցունել: Կալէսիցիները ալ աւելի ապահովութեամբ ընելու համար աս ապօրինաւոր դործը, խորհուրդ ըրին ինքզինքներին անձանթ ընել կրնան հազուադէպ հալնելով ու երեսներն սեռել ներկելով:

Նիկը Պերիի փողոցը 12 հորդ թիւը կը բանէր. իր կենդանագիրը քաշուած ժամանակը ու թսուը չորս տարեկան էր, ու դեռ առողջութիւնը տեղն էր. աս այլանդակութեան խաթունը համար՝ որ օրէ օր իր անհանգստութիւնը կաւելցնէր, վերագրուի մը ձեռք տուաւ զինքը, Սուպրիմիէ անուն, որ խիստ հաշակաւոր վերադարձ մըն էր. ասոր ըրած գործողութիւնը խիստ շատ երջանիկ վախճան մը ունեցաւ: Բայց բոլորովին աղէկցաւ միջարդեօք, երկրայելի է: Ինչ որ է նէ ու թսուը չորս տարու կնկան մը վրայ կարելի չէ շարունակ փորձ ընել երկար ատեն, վասն զի Տիմանչ խաթունը, ու թ ամիս չի գնաց մեռաւ: Ենթադրելով տարածութիւնը տեսնելով մարդ կը զարմանայ, թէ ինչպէս չորս տարուան մէջը այսքան մեծցեր է: Ինչուան ու թսուը տարին որ հասանէ Տիմանչ որբաւորին, իր ճակատին վրայ միայն պատուաւութեան խորշոմութիւնները կը տեսնուէին. ու ան եղջիւրը երեսնալէն քիչ մը ժամանակ ետքը, մորթին ուրիշ կողմերէն ալ եղջիւրի ուրիշ պզտիկ նշաններ դուրս երկացան, ձեռուրներուն վրան ալ շատ ելան, ու որովհետեւ աս ետքիները շատ նեղութիւն կուտային իրեն, սովորութիւն ըրեր էր ատեն ատեն կը կտրէր ըզունգի նման: Ղափին ալ ուրիշ կողմը երկրորդ եղջիւրի մը

ՍՊԱՆԻՆ

Մարտի 11 Սեպտեմբեր :

Եւ չորսըքը շուտով տարածուեցաւ ամէն տեղ , և որովհետեւ անգղիացի ժողովուրդը Բոստոնի մէջ գիւրքը շատ կը բարդայ , ու անոր պատճառով ինքնիրը ու անունները շատ բաներու կը յորմարցունէ , աս խռովարար մարդիկն ալ արժան համարեցին իրենց խռովի զօրավարը Ռեքեկա անունով կոչելու ու զիւրեքն ալ անոր ազգիկները անուանել : Ուստի Ռեքեկա ըստաւոր յիշեալ ճամբու ցանկերը փոքրէն զօրով ամէն մէկ գունդին զխառնութիւն է : Բայց Ռեքեկայի աղջիկներն ալ ան գունդին մարդիկներն են : Բայց օրէ օր առաջ երթալով իրենց շատ հետեւողներ զըտան , գեղացի երիտասարդները զրեթէ ամէնքն ալ ուղեցին անոնց գունդին գրուել . բայց Ռեքեկան ներքը զարմանալի ընդդիմութիւն մը ցուցնելու համար կնկան հազուադէպ միայն , միայն խիստ բարձրահասակ ու յանգուգն մարդիկներ կընդունեն իրենց խռովին մէջը : Ուստի հիմակահիմայ տեսակ մը կարգադրութիւն ունին մէջը ընկնի ու օրէ օր զօրաւորաւ ահազող կը պատճառեն հասարակութեանը : Կառավարութիւնը որ ինչուան հիմայ համբարութիւն ընելով անոնց ըրածները կը զննէր , որոշէր է կըսեն , հարկաւոր եղած միջոցները գործի դնել , ու աս խռովարար մարդիկներուն ապօրինաւոր վարմունքը զսպելով բարեկարգութիւնը ու հանգստութիւնը նորէն հաստատել Կալիֆոռնիայի երկրին մէջ :

Խռովանայի խռովութիւնը միշտ կը շարունակուի , բայց կեղծի թէ շատ խորհրդարան ստանալու համար հաստատուած ընկերութեան անդամներուն մէջ առջի միաբանութիւնը չկայ հիմայ . ու հաշակաւոր () քննելին իշխանութիւնը ու ազդուութիւնը օրէ օր կը րոկարանայ : Եւ իշխան ընկերութեանը դէմ , ուրիշ ընկերութիւն մըն ալ հաստատուեցաւ , որուն անդամները բոլորն ալ նորադանգ (բոթէստան) են :

Վիսփառութեան թաղահայրէն բարեհաճեցաւ թնդանոցի գործերուն ընդհանուր զօրապետ ու հաղաբարպետ անուանել իր Բարձրապետիւ ամուսին Լուսինի մարգարդուն իշխանը , հանգուցեալ () կիւստ Գրեյտէրիք Սիւսէքսի դքսին տեղը :

Նշան տուաւ , ու վերջապէս աջ երեսին վրայ ուրիշ մըն ալ երեցեր էր , որ ինը կամ տասը գծաչափ երկայնութեան հասած էր :

Թարգմանեաց յիստական լեզուէ աշակերտ ամն Մարտի 11 Սեպտեմբեր :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

Եւ քաղաքը աղէկ կը բարգաւաճի , որուն մէջ առաքիտութիւնը շատ յարգի է . անիկա խոտորնակ չերթար , որուն պաշտպանը առաքիտութիւնն է :

Իւր ու ճշմարտութիւնը վերջապէս վրայ կը լսան : Հաւանական պատճառութիւն մը չարախօսութեան ամենասուր զենքն է :

Եւ ինչ որ մէկ տեսակ կերակուր կուտէ , բնաւ բժշկի կարօտութիւն չունենար :

Խորտակէ՛ չար սովորութեան սրունքները :

Վիսփառը աղէկ մտածմունքներով ու աղէկ կամքերով լեցուն է :

Օտակ ունեցողին բոլոր պատանները իրենք չեն :

Եւ ինչ որ մէկ տեսակ չի փափագիր :

Վիսփառը միտքը գրածը կընստի , մտքէն չանցածը կըսէ :

Եւ մայրաքաղաքը թէպէտեւ հիմակահիմայ հանգստութեան մէջ է , բայց Սարակոսի մէջ պատահած խռովութիւնները ու ապստամբութիւնը մեծ զգացում մը պատճառեց : Վասն զի աս քաղաքին ընակիչները ոտք ելելով չեն ուզեր ճանաչել հիմակահիմայ կառավարութիւնը , ինչուան որ աղջային ընդհանուր ժողով մը չըլլայ , ինչպէս որ առաջըց խօսք տրուած էր աղջին : Սարակոսի ապստամբութիւնը ժողովը արդէն զօրքերու երկու խումբ հաստատեց , որուն շատերը կամովին գրուեցան , ու տեղութեան բանակին պաշտօնատարներէն (օֆիցիալ) 150 հոգիէն աւելի գացին : Եւ զայլին պահապան զօրքերը , որոնք հինգ գունդերէ բաղկացեալ են , միշտ զինեալ պատրաստ կը մնան : Եւ օրէ օր զօրաւոր կարգիլէ եղեր աս քաղաքին հազարակցութիւնը գրուի հետ . բայց ասոր հակառակ ապստամբները ամենեկն հոգ չեն տանիր աս բանին , ու ազատ թող տուած են , որ ս'վ որ ուզէ գուր ելլէ կամ ներս մտնէ :

Յիշեալ զօրապետ տեսնելով որ անհար էր խռովութիւնը զսպել , որովհետեւ քիչ զօրք ունէր իր հրամանին տակը , ուղեց Լիթաֆէրայի ամրոցը մտնել ու հոն մնալ , բայց մէջը եղողները չուզէլով ներս առնել զանիկա , պարտաւորեցաւ ձիաւոր զօրքերուն ձմեռանոցը մտնալ , որ ամրոցին քովն է , ուր տեղ երկու օր կենալէն ետքը իր զօրքերով քաղաքին գուրս ելաւ :

Սարակոսի աղջային ժողովը առջի ապստամբութեանը պատճառով քաղաքական պաշտօններէ զերկուսն անձինքը բոլորը կանչեց , ու նորէն յանձնեց անոնց իրենց նախկին պաշտօնները :

Գնդապետ Լիթաֆէրը , որ Պարչէլնի ապստամբ զօրքերուն հրամանատարն է , Բրիմ զօրապետին հանդիպելով սաստիկ պատերազմեցան : Լիթաֆէրը բաւական զօրք կորսնցուց աս կռիւնին մէջ ու 200 հոգի չափ թշնամիներուն ձեռքը անցան :

Մարտի 11 Սեպտեմբեր 4 թիւով հե-

Վանակը շատերը կը մեղսուեն , բայց գինին աւելի շատերը :

Վեց ոտք հողը ամէնը մէկ հաստար կընէ :

Եւ ինչ որ մէկ տեսակ մարդ , որ ինքզինքը կառավարել գիտէ պէտք եղածին պէս :

Եւ ինչ որ շատ ապրիլ կուգէ , պէտք է որ երբեմն իր կենսիքին ընթացքը փոխէ :

Տղայք իրենց պզտիկութեան տեսն , ծնողքներուն գլուխը կը ցաւցնեն , երբ որ մեծնան՝ սիրար :

Ով որ հասարակութեան կը ծառայէ , բոլոր քոսոտ տէր մը ունի :

Բարձր ու մեծ տունը՝ բարձր ու մեծ նեղութիւն է :

Եւ ինչ որ առջին շարուած ակումբներ , սրտին բերդերն են :

Եւ ինչ որ մէկ քիչ շատ կը փրթէ , քսակը աղէկ նայէ :

Ինչ որ ամէն էջերը կ'ունենին համեստ ունենային , համեստ շինողները ի՞նչ աղէկ առուտուր պիտի ընէին :

Հարստութիւնը ու առաքիտութիւնը շատ անգամ մէկ տեղ ընկերութիւն չեն ընէր :

Թարգմանեաց յանգիւստական լեզուէ Սարգիս Տ . Գառնարեան :

տեսալ հրամանը կը հրատարակէ , որն որ պատեւարողի պաշտօնատար մօսիւ Կէրտնոն Վաթարնի ընդհանուր զօրապետին իրեւած է :

« Հիմակահիմայ կառավարութիւնը , որ յօժարամիտ սրտիւ պատրաստ է վարձատրելու աղջին ու թաղահայրէն բարեհաճ զօրքերուն հաւատարմութիւնը նմանադէպ կը պաշտօնատարի մեծ խառնութեամբ ու անսպասելիութեամբ պատճիլ զանոնք , որ խառն գախութիւն ու ներքութիւն կընեն տէրութեանը : Ուստի գնդապետ Լիթաֆէրը , որուն յանձնէր էր կառավարութիւնը քանի մը խումբ զօրքեր , Պարչէլնի ապստամբներուն կողմը անցնելով , պարտիք հոգ տանել ձեռք բերել զանիկա ու պատերազմական օրինաց խառնութեանը համեմատ պատճիլ զենքը , նմանապէս և ուրիշները , որոնք Կորին Վիսփառութեան կառավարութիւնը կը մտնեն , և հայրենեաց հանգստութիւնը վրդովելու պատճառ կը լսան :

« Մարտի 11 Սեպտեմբեր 4 թիւով հեռուէն մօտ եղած վառօդարաններէն մէկը կըսէ առաւ երէկ առտու : Վանի մը բանուորներ ու վառօդի պահապաններ սպանուեցան : Վաղաքին երեւելի վնաս մը չեղաւ : Եւ զի պատճառն պատճառը տալուին չիմացուեցաւ :

ՀՈՒՆՆԵՐ

Եւ ինչ , 10 Սեպտեմբեր :

Հասարակութիւնը կը յուսար թէ Եւրոպայի թաղահայր (որ Եւրոպային իր երկիրը երթալու համար հարկաւորապէս Կիւսէնի խիստ մօտէն անցնելու էր) պիտ' որ բարեհաճ մեր երկրին ալ իր աղանական քաղաքավարութեանը նշան մը ցուցնել . եթէ ցտմարեալ ալ ելլելու չըլլար , անունէնին որ քանի մը վայրկեան աս քաղաքին նաւահանգիստը կը մընայ , անոր զլխաւոր կառավարիչներուն խոնարհ յարգանոց հաստատութիւնը ընդունելու համար : Ուստի աս անկախութեամբ շատ մարդիկ ու օտարականներ նաւահանգիստը ժողովուրդեցան . բայց մեծ տրտմութեամբ տեսան որ Եւրոպայի թաղահայր շուգնուել խիստ արագութեամբ մը անցաւ քիչ մը հեռուէն , առանց միտքը բերելու որ Հոլանտային առջիկէն կանցնի :

Կառավարութեան ծախքերը օրէ օր շատնալով , տարեկան ունեցած եկամուտներէն տասը միլիոն Ֆիլիպին աւելի ծախք եղեր է անցած տարի : Եւ տարւան համար ալ կըսեն թէ ծախքը եկամուտէն 12 միլիոն Ֆիլիպին աւելի պիտ' որ ըլլայ :

ԻՒՆԻՒՆ

Իզալայի հինգերորդ գիտնականաց ժողովը սեպտեմբեր 3ին սկսեցաւ : Վաղաքական խռովութիւնները , որոնց տեսարան եղաւ աս երկիրը , թէպէտեւ չկրցան արգիլել աս ժողովը , բայց 300 գիտնական անձինք միայն ներկայ դրսնուեցան , որոնց մէջ քանի մը գաղղիացի ալ կան : Ուրիշ տարիները աս ժողովին անդամները ինչուան 800 հոգի կը ըլլային :

ՓՕՐԹՈՒԿԱՆ

Ի իզայանայի գերբերը ու օրագիրները կը ծանուցանեն թէ Եւրոպայի տէրութեան հետ առևտրական նոր դաշնադրութիւն մը հաստատուեցաւ ու մօտ օ-

ընդհանուր պիտի որ դրուի : Կըհաստատեն թէ աս դաշնադրութեան շուտով կատարմանը համար Լնդոնի խորհրդարանը քանի մը դիւրութիւններ ըրաւ յիշեալ տէրութեանը :

ՄԱՆԴԱ

25 Սեպտեմբեր :

Հորանոյն տէրութեան նաւատորմիդը՝ Բարձրագոյն Զանգի արքայազուն իշխանին հրամա՛նաւորութեամբ Մահոնէն Ղիպրոսէն դարձաւ ամսուս 13 ին : Կըհաստատեն թէ յիշեալ իշխանը միտքը փոխեր է ինչուան Մալթա ու արեւելեան ծովերը զարու : և թէ քիչ օրուան մէջ Հոլանտա դաւնալու է բոլոր նաւատորմիդիդը :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ըթէնք , 28 Սեպտեմբեր :

Հասարակութիւնը մասնաւորապէս աղքատին ժողովոյն ներկայ գտնուելու անդամներուն ընտրութեանը վրայօք ղեկավար է : Ըստ գործողութիւնը արժանաւոր բարեկարգութեամբ ու անկողմնապահ հոգեւոր չքովով, շատ երկբային է որ ընտրուած անձինքը կարող ըլլան իրենց պաշտօնը արժանապէս կատարելու : ու բաւական տաղանդ ունենան ասանկ ընդհանուր ժողովի մը մէջ պատահած դժուարութեանցը դէմ դնելու : օրինաւոր իրաւունքներ առաջ բերելով :

Հասարակութիւնը կըկարծուի որ աղքատին ժողովը բանի մը շարքէն աւելի չեղնար . ուր տեղ նախ թաղաւորական ամբողջ ժողովներու վրայօք , ու 60 միլիոն ֆունտ փոխ առնուած գումարին համար խորհուրդ պիտի որ ըլլայ , ու ետքը ուրիշ քաղաքական բարեկարգութեանց վրայօք քննութիւն ըլլալու է :

Մօսկու Մալթոօքօրտմթօն հասաւ աս նաւահան զիստը ամսուս 22ին ու քառասնօրեայ զգուշութեան պայմանաւոր հոկտեմբեր 1 ին կըլըմընայ : Ենթ որը կըսպասուի Գուլօնէն մօսկու Բօլթէթին : Ըստ երկու երեւելի ու քաղաքականութեան հմուտ անձինքը թէ որ մտերիմ սիրով միաբանին , կըյուսալցուի անշուշտ որ հունաստանի մէջ բարեկարգութիւնը ու խաղաղութիւնը կատարելապէս կըհաստատուի օրէ օր :

Թաղաւորին տօնախմբութիւնը ամսուս 18 ին, ու թագուհիին իրեր օր առաջ, մեծ հանդէսով կատարուեցան : Թաղաւորը ու թագուհին նոյն օրը է կեղեցիկ գային պատարագ լսելու : Ժողովուրդը մեծ ուրախութիւն ու գոհութիւն յայտնեց աս աւելի ներուն մէջ, ու զիշերը մեծ ճրագաւոյց եղաւ : Ըթէնքի նաւահանգիստը լեցուն է պատերազմական նաւերով ու տակաւին ուրիշ նաւեր ալ կըսպասուին : Գաղղիացի պատերազմական շոգեհաւը Գարգար ըստած՝ մօսկու Բիքթաթօրի Գաղղիոյ դեսպանին հրամանովը Գուլօն կերթայ ասօր :

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒՐՈՊԱ

Օմիւնիա , 8 Հոկտեմբեր :

Քաղաքի բարեխնամ առաջնորդ Գերապատիւ Ստոյպէն Մարկիսիկոսը հինգ ամիս չափ իր հոգեւոր կառավարութեան տակը եղած վիճակները

հայրական այցելութիւն ընելէն ետքը , անցած շաբաթ վերադարձաւ մեր քաղաքը , որուն գալուստը մեծ միջթարութեան և ուրախութեան պատճառ եղաւ հայագի բարեպաշտ ժողովրդոյ : Յիշեալ Սրբազանը բոլոր վիճակներուն եկեղեցեայ ծախքը ու եկամուտը քննելով ու աննցմէ մէկ քանիին ունեցած պարտքերը ըստ հարաւորութեան թեթեւցրնելով, կերպ կերպ բարեկարգութիւններ ըրած է : Մանաւանդ դպրատուններուն յառաջադիմութեանը համար մանաւոր խնամք տանելով քանի մը գիւղաքաղաքներ յատուկ վարժապետներ կարգեր է , և ուրիշ քանի մը տեղուանք ալ ասկէ խրկելու տնօրէնութիւն ըրած է : Ըստ վարժապետներուն որուն շատ և որուն քիչ ըստ հարկաւորութեան և ըստ արժանոյն օգնութիւն պիտի որ ըլլայ Սինեաց Բնկերութեանը կողմանէ ու յիշեալ Սրբազանին հայրախնամ միջոցով նոյն դպրատանց բարեկարգութեանը ու յառաջադիմութեանը համար հոգ պիտի որ տանի ընկերութեան կառավարութիւնը :

— Լատիայի Լոյտի ընկերութեան կանոնաւոր շոգեհաւը ամսուս 5 ին , այսինքն սովորականէն երկու օր ետքը հասաւ գէշ եղանակներուն պատճառով : Յիշեալ շոգեհաւին մէջ ճամբան մէկը մեկնելով , տեղեւոյ առողջութեան ժողովը առջի բերանը որոշեց որ քառասնօրեայ զգուշութեան կանոնները զործքի դրուին : Բայց քանի մը ժամէն ետքը աղէկ սոսկաւորով որ մեռնողը փոխադրական հիւանդութեան նշան մը չունի ամենեւին , հրաման տրուեցաւ նորէն որ քաղքին հետ հաղորդակցութիւն ընէ :

— Համալուրկէն սեպտեմբեր 8 թիւով հետեւեալ լուրը կուտան : Ըստ ժամանակը որ սոսկաւոր հրկիշութիւն մը պատահեր է Լիպէք քաղաքը . արդէն բոլոր մէկ փողոց մը միմիկ դարձեր է : Ըստ կըվախնանք որ անցածները Համալուրկի պատահած դժբաղդութեանը նման բան մը չըլլայ աս կրակն ալ :

ԱՄԵՐԻՔԱՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ ԻՆՎԵՍՏ

Թրեստ , 27 Սեպտեմբեր :

Բամպակ : Կուղուրի ու գինեւոր բարձրցան . որոնց արժողութիւնը հետեւեալը է :

Լմերիգայինը	23-25½	Ֆիօրին խանթարը
Կիպրոսինը	20	»
Մաթօինը	26½-27	»
Սոպուլան	21½-22	»
Խաւապան	24	»

Հիմակուհամայ քաղաքի մէջը եղած զանազան տեսակ բամպակներէն 79:900 պալեա կայ :

Ղէհրի : Ընշարժութեան մէջ է . առաջին տեսակ աղւոր ապրանքը հաղիւ թէ 80-85 ֆիօրին կը ծախուի խանթարը . միջակ տեսակը՝ 75 :

Փալամուտ : Պատուական ապրանքին գինը՝ 10-12 ֆիօրին է խանթարը ըստ տեսակին . միջակ ապրանքը՝ 9 ֆիօրին : Բարաքիս մէջը հիմակ 14,780 խանթար փալամուտ կայ :

Չէթ : Բօրֆուրի ու արեւելեան կողմերու ապրանքին գինը՝ 20½-21 ֆիօրին է օրնան :

Չամիչ : Ընկուտ չամիչը Լոմբիու , 23 ֆիօրին խանթարը ծախուեցաւ . սե չամիչին գինը՝ 6 ֆիօրին է :

Թուղը տուի մէջ . 20 ֆիօրին է խանթարը : Բիթի : Ընշարժ տեսակը տերեւ (եաքրաք) 110 ֆիօրինի խանթարը զիւրաւաճաւ է , ֆիօնէն 110-115 ֆիօրին է . քիչ ապրանք կայ և կուղուրի :

ՏԱՃԿԱՍՏԱՆ

Օմիւնիա , 8 Հոկտեմբեր :

Մեր վերջի առեւտրական ծանօթութիւնէն ի վեր երեւելի փոփոխութիւն մը չեղաւ ապրանքի գիներուն վրայ , ուստի այս անգամ շատ բան չունինք ծանուցանելու :

Փալամուտ : Ըստ շաբաթ 500 խանթարի չափ ծախուեցաւ Թրեստու տեսակ՝ 115 զուռուշ խանթարը :

Տօրն : Կուղուրի ու գինեւոր հաստատու են . աս օրերս 100 չուվալ Պախըրու ապրանք ծախուեցաւ 315 զուռուշ խանթարը ու 200 չուվալ Բայաճըք , 292 զուռուշ :

Ղէհրի : Ըստ շաբաթ 100 չուվալ զնոյ առնուեցաւ 16 ¼-18 ½ զուռուշ օխան ըստ տեսակին :

Խաւիչ : Կուղուրի , Լմերիգայի տեսակը՝ 430-460 զուռուշ հարուր օխան զիւրաւաճաւ է :

Լեղակ : Բիչ կայ . Հոլանտայի տեսակը՝ 100-130 զուռուշ է օխան . Պէնկալայինը՝ 95-105 :

ՓՈԽԵԼԵԿՈՒԹԻՒՆ

Օմիւնիա , 7 Հոկտեմբեր :

Լճարա	108¼-109
Սարսիլա	169½-170
Լիփրնօ	143

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱՏՈՊ ՄԱՏԵԱՆՔ

ԲՍԵՆՈՓՈՆՏԵԱՅ

Կերտի խառնու պատմութիւնը :

Աս աղբոր գիւղը որն որ աշխարհի առին կըթուալ աղբը մէջ խառնուելու պատուականութեան ու հեղինակին ոճին աղ. նաւութեանը համար իրենց լեզուին մէջ թարգմանած են , մեր հայերէն լեզուն ալ թարգմանեց յունարէն բնագրին , Վիկտոր Միլիթարեան միաբանութիւնէն Հ. Յովսէփ Գալթըրձեանց գիտ. նախն փարգապետը , ու իր աղգաւոր ու աշխատական հօրը Սերովիէ աղային ծախքով աս տարի յիշեալ միաբանութեան տպ. րանը տպագրուեցաւ :

Հեղինակին միջակ անունը աս պատուական գրքիս բաւական գովաւոր ըլլալով , աւելորդ կըտեսնուի մեր աղբին ուսումնասիր. ները յորդորելու որ անկից ստանան : Մանաւանդ որ կըյուսանք թէ թարգմանչին հմուտ ու ընտիր գրին ալ հայկերէն լեզուագէտներուն առջեւ հեղինակին յարգը անշուշտ կեւեղունէ : Որով և ան յարգոյ Միաբանից օրէ օր աղգօգուտ գրքեր դուրս հանելու փախարը կուենայ : Մէկալ կողմանէ ալ գրքին մեծութեանը նայելով գրուած գինը , (որն որ 48 դարանթան է , այսինքն տաճիկ ստեղծ տարը զուռուշ չափ) առատածեւան աղգաւոր ներուն փայթը կըզրգուէ , ինչու որ անշուշտ քարեքարութեամբ տպուած ըլլալուն , ասանկ քիչ գին գրուած է :

Սուրբ Մարտիկեան վարժարանը տպուած :

Նարեկ , Թղթակագրին գինը	զուռուշ 12
Սաղմոս	7 , 20
Տրամաբանութիւն	8
Խորհրդածութիւն	8
Կորին	2
Արեւիք Արիստոմոսի	1 , 20
Քրիստոնէական վարժապետութիւն	1
Քերական	1 , 20
Հեգերէն	1 , 20

Կըծախուի Իզմիլ Մարտիկեան վարժարանը : Պօլիս՝ Քէօսէ քեհեայի փողոցը Ֆիլանթրօպ . Մարկիսի ու Կիւրճեան Պ . Ստեփանին մաղաղան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՊԱՊՕԵԱՆ